

ՎԱՐՁԱՏՐՈՒՄԻ ԻԶՄԻՐԵԱՆՑ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ 1912Ի ՄՐՅԱՆԱԿԱՆԻ

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(1512-1933)

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱՇՈՒՂ

ՍԱԵԱԹ ՆՈՎԱ

6 ՀՈՒՍԱՏԻՊ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐ ԵՐԳԵՐԸ



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՅՆԱՇՄԱՐ ԹԻՒ 12

Բ. ՀԱՏՈՐ

1933

ԳՐԱՏՈՒՆ

ՎԱՀԱՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

18, Շարա Թէվֆիք, 18 — Գանիրէ

Տպագրութիւն Յակոբ Փափազեան, 3, Միտան Սուարէս — Գանիրէ

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ՄԱՅԱԹ ՆՈՎԱ

ՆՇԱՆԱԽՈՐ ՀԱՅ ԵՐԳԻՉ

1719 - 1795



1 Մայաթ Նովա

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐԸ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՅԻՆՆԵՐ

Աշուղները հինէն ի վեր գոյութիւն ունեցած են Հայաստանի մէջ, պարզապէս աշուղներ, ժողովուրդի համեստ գատակարգի անձեր, իրենց սէրը պակաս չեն ըրեր ազգին ու ժողովուրդին վրայէն, ուրախութեան մէջ ուրախացեր, տխրութեան մէջ տխրեր, և ուր որ վարդապետին քարոզը դադարէր է, անանք անդադար մագնիսացուցեր են ժողովուրդը թէ սիրաւ չափելով, թէ խրատով և թէ պարսա-

ւով: Միշտ ժողովուրդին հետ զանուէրով անոր պակասութիւնները այնպէս ըմբռներ են, որ իբր թէ իրենք ալ նոյն յանցանքներով բեռնաւորուած ըլլային, սրտերնուն մէջ աւոր զգացումը ունենալով զուարթ խօսքերով նկարագրեր են սիրոյ աւուշ գգուանքն, ու միանգամայն անգութ մարդիկը հրապարակաւ հարածեր են, ու բոլոր կեանքերնին անցուցեր են երգելով և քեմէնչէ զարնելով, ու իրենց սրտի ցաւերն ու տարփանքը ժողովուրդին թողեր են և վարձքերնին ալ ժողովուրդին աւանդեր են:

Հայերը որ միշտ սիրեր են լաւ ապրիլը, Պարսից ու Յունաց քաղաքականութիւնը իւրացնելով, անկարելի է որ իրենց հեթանոսական շըրջանին ալ քերթուածներ և աշուղական երգեր չունենան:

Ազգը միշտ ունեցած է իր սրտին մխիթարիչը, այսինքն իր երգիչը, գուսանը, երգահանը: Աստիճապ հեթանոսական ժամանակներէն մինչև մեր օրերը իրարու յաջորդելով յիշատակնին թողեր են: Այսպէսով Ազգային երգիչները անդադար երգեր են, գրգռելով ազգին սիրտն ու ականջները,

առանց իրենց ետեւէն գրաւար յիշատակ մը թողլու: Երգիչներուն կէսը կոյր, կէսն ալ գրեւ կարգաւ չգիտցող ըլլալով, անոնց ձայնը յուզեր է մարդկութեան սիրտը:

Անոնց սիրուն խոսքերէն շատեր չեն հասած մեզ, մէկ կողմէն անհագութեան երեւոյթն է միւս կողմէն ալ պառակտեալ անխնայ կերպով փնտցնելը այն գեղեցիկ ձեւագրերուն, որոնք գիւլըլայ որ թուր ուղէ հետեւիլ իր հոր արհեստին և աշուղ գումար մէկ օր:

Հանգուցեալ Բիւշիւկ-Նովայի կիսը իր սուգի օրերուն իր ամուսնային թուղթերը և տետրակը ատեն թանկիւր ձգեր է, վախճալով որ չըլլայ թէ իր սրտին ալ հորը ձամբան բռնէ և երկրէ երկիր թափառելով աշուղ գումար: Աշուղը տուն տեղ չձանձնար, ան հասարակաց ծառան է, անոր տունը փողոցը և ժողովուրդին քովն է:


Ասոնց մէջ հրաշք մ'է որ Սայաթ Նովայի ձեռագիր տետրակը մնացեր է և բժիշկ Գէորգ Ախարդեան իր բնագործակ ուսումնասիրութիւնը ըրեր է և երգերն ալ փրկելով մեզ հասցուցած է, այդ գործէն և «Մասեաց Աղաւթի» էն, Բնագործակ Օրացոյցէն (1926), և Գեղարուեստէն ու Պէտրութեան մէկ գրքոյից մը և «Նաւասարդ» թերթէն զգտուած ենք:

Ոչ ուսուղ գաւառապարտիկն են մեր վանքերը որոնք չեն պահպանած այդ աշուղական գրականութիւնը, չէ թէ թշնամութեամբ, այլ նկատելով այդ երգերը գիւտական ամբարշտութեան գործեր, և այս գաղափարը վանքերէն ժողովուրդին տարածուել է և նոյն իսկ աշուղներն ալ որոնք թէ օրհնուած կ'զգային, բայց միշտ ալ կը կոտորուէին թէ իրենց արհեստը մարմնապաշտ, տարփոմով և մեղա-

պարտ էր քանի որ կ'երգէին սէրը, գինին, և ասոր համար ալ իրենց մեղքին քաւութիւնը միշտ կը խնդրէին և թողութիւն չնորհել և Աստուած ողորմի՛ ընել իրենց հոգւոյն:

Աշուղներէն շատեր ալ որոնց մէջ բարեպաշտական զգացումը շատ զօրաւոր եղած է, կարծած են թէ Հայ լեզուն միայն եղած է Ստեղծողին և Սուրբերուն փառաբանութեան համար, իրենց կրօնական և խրատական երգերը միայն հայերէն շարագրեր են ալ իրենց սէրը, արիւրը, յայտն եր և Պարսից, Թրքաց և Վրաց լեզուներով: Ասոնցմէ ոմանք ալ բնաւ հայերէն երգ չեն գրեր, ինչպէս երեւելի Բէշի Օղլուն, Ալլահալերան և այլն:

Աշուղները մաշակեր են 7 տարի վրայի վրայ Վարդապետի պանքը պահելով, ուխտի գացեր են կնապաշտ նախնեաց Աշաից տեղերը, ու երեսին քարերուն քսելով ծունկի վրայ դողդողով մօտեցեր են համբուրելու, նշխարներն Ս. Յովհ. Մկրտիչի, ու ունո՛ցմէ խնդրել խմատութիւն, հանձար ու երգելու կարողութիւնը, շատ անգամ արաւաքեալի պաշտօնը կատարել են, մեծ մասը անուսում, ի ծնէ կոյր կամ աղաքութեան տանն ծաղկաւէր, բերնուց գոց սովեր են Աստուածաշունչը և Ղուրանը, նստեր են մահմետական կարգադրութեան հետ և վերին ազդե ութեամբ այժ ասած իրենց պաշտպանին անունը տալով «Չանկի փիւր Մուշ Սուլթանի (Սայաթ Նովա Չանկի) փիւրգան իշուփ տըր» քէմէնչէն ձեռքերնին տաւ քերթողական և կրօնական վէճերու մէջ կապեր են շատ խմատուել, ալիւմ (գիտնական) մարդիկ և համարձակ տարածեր են օտարազգիներու մէջ՝ քրիստոնէութեան իմաստը և աւետարանին առաւելները:



(«La Roserie» Զօպանեանէ)

2

ՍՍՅԱԹ ՆՈՎԱ ՄԷՋԼԻՍԻ ՄԷՋ

Նկար Գ. Շարբաբեանի

Հայ երգիչ երէն կրնանք յիշատակել Նահապետ Բուշակ, որու մասին Պ. Արշակ Զօպանեան ունի ընդարձակ ուսումնասիրութիւն մը և հրատարակած է նաեւ թէ հայերէն և թէ փրանսերէն իրեն երգերէն շատերը:

Յովհաննէս Թուրքաբանցի՝ ապա Կաթողիկոս Կիլիկիոյ, որուն տողերը կը կաղմեն տաւջին տպեալ հինգ հայերէն գրքերէն մին:

Գէորգ Ախարդեան կը յիշատակէ իր գործին մէջ թէ ձեռք բերած է գաւառական լեզուաւ գրուած երգեր, որոնց հեղինակներն և երգիչները եղած են, բացի Սայաթ Նովայէ, Ղալեհնց Բաղասար, Շամչի Մէլքօ, Լէօն, Թուրինչ, Օքսուղ Օղլան, Նալբանդ Օղլի, Ղարիբ Օղլան, Չախմախչի Եաղուբ, Սէփիլ Օղլան, Բէշի Նովա, Գուրչի Օղլի, Գօրաչի, Զահիլ Օղլան, Նաւրալի, Նաբինջ Օղլան, Բիշիկ Նովա, Եաղուղ, Արուսիկ Բեգում, Սայաթ Նովան:

Ալլահալերան, Կաղաթ Օղլան, Միսկին Բուրջի, Եաղուբ Օղլի, Արաղու Սարգիս, Աղամ Աղբար, Գիւրջի Նովէ, Նարդիկ, Գօրաջի Օղլան, Բանդի, Շիւրին, Նիրան, Ալլան Օղլան, Մէլադ, Ղաղաղ Յովսէփ, Իվան, Օհաննէս, Բիւանհան, Յակոբ, Բիրմայ Լայն: Ասոնցմէ շատերը Թիֆլիսցի, երեւանցի, կէնճցի, Շամախցի և Ամսերխանցի են:

Ասոնցմէ զատ կան շատեր ևս, ասոնցմէ ոմանք կարեւոր, ոմանք ալ անկարեւոր երգիչներ եղած են: Պիտի խօսինք անոնցմէ ոմանց վրայ, և ոմանք որ տեղեկութիւններ ունին, չնորհալալ պիտի ըլլանք եթէ մեզ խմացնեն:

Հանգուցեալ Տրդատ Եպիսկ. Պալեսան հրատարակած է 2 հատոր Հայ Աշուղներ անուն գրքեր, որոնք սուկայն գժբաղդարար կէս մնացած են:

Այս անգամ կուզե՞ք կենապարտ Սայաթ Նովան

588-73
3342
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒՄԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒՄԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒՄԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՆԱՍԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՅԱՔ ՆՈՎԱՅԻ

Սայաթ Նովայի հայրը Մզտեհի (Մահաթի) բախա փնտուրու մտապրութեամբ Հալէպէն կ'անցնի Վրաստան կը հաստատուի Թիֆլիս և կ'ամուսնանայ Հալաբարցի աղջկան մը հետ: Այս ամուսնութենէն կը ծնի իրենց մանչ զաւակ մը Արութին (Յարութին) 1711 ին:

Յարութին մանուկ հասակէն աշակերտ կ'ըլլայ ջուլհակի մը քով, ուր օժտուած բնական ազգանկով կարճ ժամանակի մէջ կը տիրանայ արհեստին և նոյն իսկ կը հնարէ մեքենայ մը, որով փոխանակ կտաւ փողոցին մէջ հենելու, ինչպէս որ մենչեւ այդ տաւն սովորութիւն էր, կը հենէ և կը գործէ աշխատանոցին մէջ:

Ջուլհակը շատ կանուխէն կ'զգայ իր մէջ քերթողական հուրը և Ա. Կարապետի կարողութիւնով կը սովորի քամանչէն հմեղարն ու ամբուրիս:

Իր փափաքը եղած է աշուղ ըլլալ, ան ազատ ժամանակները կը վազէ լսելու երգիչներու մրցումը և ինքնիրեն աւիրեցաւ յիշեալ նուագները: Կանուխէն կ'սկսի երգեր յորինել, որոնք նաեւ կ'երգէր իր ազգականներու տունները, յետոյ Թիֆլիսի նշանաւորներու տունները որոնք կը հրաւիրէին իրենց սաղանդաւոր պատանին: Յաջողութիւնը խրախուսեց Յարութինը վճռականօրէն նուիրուելու աշուղութեան արուեստին, ընդունեց ժողովուրդին իրեն առած Սայաթ Նովա անունը և շուտով եղաւ Թիֆլիսեցոց ամենատիրելի աշուղը:

Ըստ քննութեան Յովհ. Թումանյանի, Սայաթ Նովա հնդկաց լեզուաւ

կը նշանակէ բազաւոր երգի կամ իշխան երաժիշտ:

Վալէրէյ Պրիւսով կը գրէ իր մասին. —

«Որչափ կարելի է դատել Սայաթ Նովայի գրութեանը՝ ան կրցեր է ըստ բաւականի լայն զիտութիւն ունենալ, անոր բանաստեղծութեանց մէջ կը շօշափուին բաւական բարդ խորհրդներ, կը յիշուին զանազան երկիրներ և ժողովուրդներ, կը զգացուին պարսկական բանաստեղծութեանց արձագանգներ, ուսկից ի մէջ աչոյց Սայաթ Նովա փոխ առած է իր երգերուն ձևերը: Բայց ասկէց՝ Սայաթ Նովա գիտէր շատ լեզուներ, ինքը կը գրէր իր ստանաւորները ոչ միայն հայերէն՝ այլ նոյնպէս վրացերէն և թուրքերէն, մեզի հասած են Սայաթ Նովայէ՝ թուրքերէն գրուած 115 ստանաւոր, հայերէն միայն 46, և Վրացիք կը համարեն իրենց բանաստեղծը:

«Սայաթ Նովա հիմնեց, նուիրաւորեց աշուղներու երգերուն համար առանձին ձև մը ստանաւորներու՝ որ կը մօտենայ պարսկական «զազել»-ի որմէ յետոյ այս կերպը սիրուեցաւ և տիրապետեց բոլոր երգիչներուն վրայ: Անհրաժեշտ կը թուէին միեւնոյն բանին (կամ քանի մը նման բաներու) շարք մը ստանաւորներու վերջը, այս ձևի պահանջման համեմատ, նոյն ինքը կը ստիպէ բանաստեղծը՝ փնտուր զանազանութիւններ միակերպութեան մէջ: Բայց միեւնոյն ժամանակ գրեթէ բանաստեղծէն անկախ՝ կուտայ ստանձին նուագաւոր խորին ներգաշնակ երաժշտականութիւն մը անոր ստանաւորներուն: Ասով Սայաթ Նովայի մէջ կը միանան զգայուն հոգատարութիւն՝ ստանաւորը նուագաւորը ընելու համար:



(Ինքնապատկեր)

3 ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՐԱԿԼ ԹԱԳԱՆՈՐ
որուն Բեմանչիսըն եւ Սայաթ Նովա

«Սայաթ Նովայի երգերը կատարուած են ներգաշնակութեամբ նոյնաձայն սկիզբով, որոնք կը կրկնուին նաեւ ներքին յանգերով: Ան համաշխարհային բանաստեղծութեան մէջ մեծ վարպետներէն մէկն է: Ասոր հետ նոյն հրաշալի ճաշակ մը ունի, որ կարող է դանել նոր եղանակներ ընդհանուր գործածուած չափերուն մէջ: Այս վերջին տեսակէտով կարելի է Սայաթ Նովան բաղդատել դարուս բանաստեղծներուն մէջէն Բայմանթի հետ: Սայաթ Նովայի հետեւողներուն և նմանողներուն մէջ անոր բնաւ տակեղծութեան մասնաւոր յատկանիշները այլատեսութեամբ են, ընտրուած ձևեր վերածուեցաւ մեծած կրկնութիւն, զերու, երաժշտականութիւնը՝ դատարկ

ձայներու խողի մը, եղանակներու բովանդակութեան նուրբ փոխանցումը՝ սաղակալի միակերպութեան: Այլ Սայաթ Նովայի մօտ բոլորովին կենդանի և իր խելական բանաստեղծական հանձարի ուժով ոգեւորուած է: Քերթողը իրաւունք ունէր երբ հպարտութիւնն է՝ որ ստեղծեր է Որտոխտի և Պուշկինի «Կոթող» բանաստեղծութիւնը, թէ իմա քարտիի քար ու կրէն է»: Կուղէի հաւատալ որ գէպի Սայաթ Նովայի Կոթողը «խոտով չի ծածկուիր ժողովրդական ճանապարհը»: Սայաթ Նովայի նման բանաստեղծներու վրայ կրնայ և պէտք է հպարտանայ բոլոր ժողովուրդը, ան երկնքի մեծ չնորձն է որ կը զրկէ ոչ ամենուն և ոչ յաճախ, ասոնք նախախնամութեան ընտրեալներն են օրհնարեր իրենց դարուն և իրենց հայրենիքին» . . .

Գ. Բաշինջաղեան կը գրէ. —

«Սայաթ Նովան գրել է երեք լեզուով, հաւասար յաջողութեամբ, մի բան, որ ոչ թէ հաղուադիւտ է, այլ եղակի: Նմանօրինակ երեւոյթ մենք չգիտենք ինչպէս կովկասեան իրականութեան մէջ, այնպէս էլ համաշխարհային գրականութեան մէջ, որ մի բանաստեղծ երեք լեզուներով երգէր սիրոյ և ճշմարտութեան գաղափարները: Այս բոլորը ցոյց է տալիս, որ Սայաթ Նովան եղել է ընդարձակ հայեացքներով ու լայն որսով մեծ մարդ: Երգելով թրքերէն — նա սիրել է վրաց աղգը, հաւասար հայ աղգի հետ: Եւ նա կատարում է իր առաքելի այս գերն այն ժամանակ, երբ կովկասեան աղգերն իրար հետ զանազան վէճեր ու թիւրիմացութիւններ ունէին: Սայաթ Նովան պե-

հետ չի ուսումնասիրուած, դա մի հա-
նելու հայրն անձնաւորութիւն է: Նրան
ուսումնասիրելու համար մենք չու-
նինք ոչ մի նիւթ, բացի իր հեռագիր
խաղի գալթարից:

«Այդ խաղի գալթարը չունի ոչ
սկիզբ և ոչ վերջ: Այս վիճակի մէջ
հասել է նա Հալիպոլիտի ձեռքը մօտ
70 տարի առաջ, երբ գալթարը գրա-
նուել է Մոզզոկուս, բանաստեղծի
քրոջ տանն ու բերուել է թիֆլիս: Իմ
կարծիքով, գալթարի սկիզբի թեր-
թերը պէտք է պարունակէին վրաց
լեզուով գրած խաղերը, որոնց նշան
անգամ չի մնացել, բայց որ Սայաթ
Նովան հալիպոլիտը չառ է գրել վրաց
լեզուով, դա սպասուած է Վրաս-
տանի ժողովուրդը, որ ի բերանում
մնացել են մինչև օրս հիշմանի բազ-
մաթիւ խաղերն ու արած գործերը:
Հէնց այդ ժողովուրդը ծառայել իր
աղբիւր Սայաթ Նովայի վրացերէն
երգերի հրատարակութեան, որ տեղի
ունեցաւ 1918 թուին, բանաստեղծ
Գրիշաշվիլու գովեստի արժանի ջան-
քերով: Իսկապէս մեծ գովեստութիւն
էր առաջ եկել խմբագրելու տեսակէ-
տից, որովհետեւ ամէն մի երգ ունէր
մի քանի վարիանտ: Չէ՞ բերանից բե-
րան անցնելով կերպարանափոխուել,
այլանդակուել էին: Այս հրատարա-
կութեանը մեծապէս նպաստեց նաեւ
Փրոֆէսոր Մարը, յարգելի գիտնական-
նը մայրաքաղաքի գիտութիւնների
ակադեմիայի արեւելեան բաժնում
գտել էր մի հեռագիր տետրակ, ի
Սայաթ Նովայի վրացերէն երգերով,
արտագրել և ուղարկել թիֆլիս: Այդ
տետրակը ցոյց է տալիս մեզ, որ գրո-
ղը եղել է բանաստեղծի որդին Յով-
հանէս — մի անշնորհ մարդ, որ չի
կարողացել հարազատութեամբ հա-
»

ցնել մեզ իր հօր ստեղծագոր-
ծութիւնները: Նա, երեւում է, անգիր
է գիտացել այդ բոլորը, բայց աղ-
ճատուած ու աղաւաղուած: Տեսարակի
վերջն ալ նա իր անշնորհութիւնը
վերագրում է իր ակնոցներին:

«Սայաթ Նովայի թուրքերէն խա-
ղերը հրատարակելու համար կան բո-
լոր յարմարութիւնները, որովհետեւ
ձեռագիր գալթարը գոյութիւն ունի,
հետեւապէս մեր առջև դրուած է մի
պարագասի նիւթ, որ հարազատու-
թեամբ հասել է մեզ: Անցեալներում,
հին ուշիթի ժամանակ, մի երկու ան-
գամ փորձ եմ արել առաջարկութիւն
անելու մամուլի միջոցով հրատարա-
կել բանաստեղծ-աղբիւր այդ երկերն
ու սեփականութիւն դարձնել կով-
կասեան բոլոր ժողովուրդներին: Առա-
ջարկել էի ապագրել թէ արարական
և թէ հայկական տառերով (ընդգիշ-
դրուած է հայկական տառերով), սա-
կայն փորձեք ապագրելու եղան:
Նրանց բովանդակութեան մասին մենք
ոչ մի գաղափար չունինք, անկասկած
պէտք է լինեն իմաստալից ու բարձր
բանաստեղծական, իբրեւ Սայաթ Նո-
վայի մտքի արտագրութիւններ: Բա-
ցի այդ պէտք է տարբերին նիւթի
կողմից հեղինակի հայերէն և վրացե-
րէն գրուած խաղերից: Այսպէս եմ
ենթադրում, որովհետեւ բանաստեղծի
հայերէն ու վրացերէն գրած երգերի
մէջ ուղղակի սարեր ու ձորեր կան
նիւթի ու բովանդակութեան կողմից:
Նոյնն են միայն արտաքին ձևերն ու
տեխնիկան: Վրացերէնից ենք իմա-
նում, որ Սայաթ Նովան կուսակրո-
նութիւն ընդունելէ վերջը չարաչար
զղջացել է: Վրացերէնից ենք իմա-
նում, որ նա զեսպանի դեր է կատա-
րել Վրաց թագաւորի կողմից Պար-




4

ՍՍՅԱԹ ՆՈՎԱ

Նկար Գ. Շարբաբեանի
(Նաւասարդէն)

սից Շահերի մօտ Վրացերէնից իմա-
նում, որ նա եղել է աղանդականու-
թեան հակառակ, զեղջուկների կողմ-
նակից և այն, և այն:
«Այս բոլորից յետոյ ինքնըստ-
ինքան համեմատելի է գտնում, որ
Սայաթ Նովայի մօտ երկու հարիւր
տարի առաջ գրած ու մինչև այսօր
անյայտութեան մէջ մնացած թուրքե-
րէն խաղերը մեծ հետաքրքրութիւն
պէտք է առաջ բերեն գրական երկերի
ուսումնասիրողների և նախաձեռնե-
ղի հատարակութեան մէջ և առան-
ձին սիրով պէտք է ընդունուեն թուրք
ժողովուրդի կողմից, եթէ յաջողուի
ապագրել: Այն ժամանակ արդէն ոչ-



5 ՍՍՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՍԻՐՈՒՆԻՆ

Նկար Գ. Շարբաբեանի
(Նաւասարդէն)

քանի կը գտնուէր կովկասեան երկը
զխաւոր աղաւթիւնների համար, որ
դեռ ժի՛ գարում գոյութիւն է ունե-
ցել մի մարդ, որ բացի հանձարեղ
բանաստեղծ լինելուց, նաեւ օժտուած
է եղել համամարդկային գաղափարնե-
րով և այդ գաղափարները նա անձամբ
տալածել է երգի և նուագարանի մի-
ջոցով: Մի խոսքով նա կամուրջ է
կառուցել ժողովուրդների իրար մեր-
ձանալու համար:

Սայաթ Նովայի կեանքը հեռու է
ուսումնասիրուած ըլլալէ, միայն թէ
յայտնի է որ ան Վրաց Հեռակէ Բ. ի
պաշտպանութիւնը կը վայելեր, որ
չառ կը յարգէր Սայաթ Նովայի տա-

զանգը և կարգած էր զայն իր արքունիքի երգիչը:

Հոն սակայն, արքունիքի մէջ սիրային լուռ վէպ մը կ'ապրի, հռչակաւոր աշուղը, իր սէրովը վրաց թագուհիին հանդէպ, որուն նուիրած է իր ոտանաւորներուն մեծ մասը:

— 0 —

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Մէկ կողմէ այդ յախուռն սէրը, միւս կողմէ իր կնոջ մահը 1768 թն, Սայաթ Նովան կը մղեն տանել իր վրայ կրօնականին սքեմը, իր մեղքերուն քաւութեան համար, կրօնաւորին սքեմին համար ան կ'առնէ Դաւիթ անունը և ըստ Յովն. Թումանեանի վերջին քննութեանց ձեւադրուած է Թիֆլիսի եպիսկոպոս: Այս աստիճանը արուած է Սիմէօն կաթողիկոսէն՝ հին աշուղին՝ Հերակել թագաւորին բացարձակ ստիպմամբ:

Դաւիթ եպիսկոպոս չկրցու իր բանաստեղծական աւելնը զսպել վանական կեանքին մէջ, ան կը շարունակէր գրել ոտանաւորներ և կարօտը կը քաշէ: հասարակաց մրցութեանց: Կ'ըսեն թէ նոր եպիսկոպոսը երբեմն աշուղի զգեստ հագնելով գողտնի վանքէն կ'ելլէր և կ'երթար Թիֆլիս և կը մանէր ժողովրդին մէջ իրր երգիչ: Այսպէս անգամ մը խնացուելով որ Թիֆլիս եկեր է՝ բոլորը յաղթող նոր աշուղ մը: Ծերունին Սայաթ Նովան չի կրնար զսպել անոր հետ չափուելու բողձանքը, կը հագնի իր թափառական երգչի հին հագուստը, կ'առնէ իր քամանչան և կ'երթայ մրցման ու յաղթութիւնը կը տանի երիտասարդ երգիչին վրայ:

Ձենք գիտեր սակայն թէ ուր պահուած է եղեր այն գրութիւնը՝ որով կաթողիկոսը թագաւորին կը զանգատի Դաւիթ եպիսկոպոսի այդ կերպ վարուելու մասին, ցոյց տալով ժողովրդեան մէջ առաջ եկած զայթակղութիւնը և ծերունի եպիսկոպոսին ապաւնալիք եկած է աստիճանէն զըրկելու, բայց թագաւորը Սիմէօն կաթողիկոսէն խնդրած է հանգիստ թողուլ իր սիրելի երգիչը, հակառակ պարագային կաթողիկոսը պաշտօնանկ ընելու սպառնալիքով:

1795 թն Պարսից Աղա Մահմուտ խանը արաբեց Թիֆլիսը և բնակչաց սպառնացաւ սատիկ կոտորած:

Ծերունի աշուղը՝ Դաւիթ եպիսկոպոս թողուց իր մենարանը և վազեց դէպի Թիֆլիս, որպէսզի ազատէ իր ընտանիքը: Ինք կրցաւ քաղաքէն հեռացնել իր չորս որդիները՝ Մեղքիսէզ, Օհան, Սաւա և Մարիամ և ուղարկել Մոզուկ ուր անոնք մնացին անվտանգ: Բայց ինքը Սայաթ Նովան Թիֆլիս էր այն օրը երբ քաղաքը ունեւած էր Պարսիկ զօրքէն: Եպիսկոպոսը ժողովրդեան բաղմութեան հետ կ'աղօթէր ծնրադրած Ս. Գէորգ եկեղեցիին մէջ: Պարսիկները պահանջեցին որ ամէնքը գուրա ելլեն եկեղեցիէն և ընդունին իսլամութիւնը: Սայաթ Նովան պատասխանեց հետեւեալ թրքերէն ոտանաւորով:

Չրխմանամ քիլիսասան
Տօնմանամ Խասան:

Ձեմ դուրս դար եկեղեցիէն
Ձեմ ուրանար Յիսուսը:

Ան որ կրօնքին համար ուրացած էր աշխարհիկ կեանքին բերած ամբողջ փառքն ու երջանկութիւնը մեր-

ժելով հաւատքի ուրացումը կիցնայ թուրքերու տակ:

Այսպէս եղերական վախճան մը կ'ունենայ 1795 Սեպտեմբերի ամսոյն մէջ, Հայ աշուղական դրականութեան ամենէն ինքնատիւ և փայլուն դէմքերէն Սայաթ Նովան, որուն հմայքը 150 տարի ետք կը վայելէ մեծ ժողովրդականութիւն՝ Կովկասի և Հայաստանի մէջ, արուեստով ոգեւորուող երիտասարդ սերունդի մը ուշադրութեան և հիացումին տալիս այդ գաւառու համար ամէն տեղ:

Սայաթ Նովան եկեղեցական եղած է եւր իր կինը կոբանցուցած է, ու այնչափ փափաքող եղած է որ իր զուլակները Թիֆլիս ուղարկած է և ինք Հարադի Ս. Նշան վանքը քաշուած է, իր ձեռագրին մէջ 1759 էն ետք երգեր չկան, անանկ որ հաւանական է այդ թուականներուն եկեղեցական եղած է:


Ինք կրօնասէր և երկիւղած էր, իր թրքերէն երգերէն մէկուն մէջ կըսէ.

Սայաթ Նովա Տին քաւ ինքար
Էրփաւ Էրփանի տուր:

Իր կինը թաղուած է Թիֆլիսի Խօչենց վանքի գերեզմանատան մէջ, գերեզմանաքարին վրայ գրուած է.

«Ի քուականիս 456, այս գերեզմանի մէջ կամ Սայեար-Նովայի «կողակից Մարմարս ինչ օղորմի» քսեմ:

Այս թուականը կը նշանակէ 1768 տարին, յայտնի է թէ կնոջը մահուան թուականն է թէ տապանաքարը դրուուելու թուականը:



(Դեղարուեստէն)

6 ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ԴԱՄԱՐԱՆԸ
ԹԻՓԼԻՍԻ ՄԷՋ

Վրան արձանագրուած է՝

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ + 1795

Ամեն մարտ չի՝ կանա խրմի
իմ ջուրն՝ ուրիշ ջրեմ է

Ամեն մարտ չի՝ կանա կարա
իմ գիրն՝ ուրիշ գրեմ է

Բուհեարս աւագ չի՝ մանա
բարափե քաւ ու կրեմ է:

ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ա.

Ամէն սաղի մէջըն գոված դուն թամամ
[դասն իս, քամանչա.
Նաքաղ մարդ քիզ չի կանա տեսնի, դուն
[նոր պահէն ես, քամանչա.
Ղաստ արա՛ էլ լավ օրերուն էրիւրն հաս-
[նիս, քամանչա.
Քիզ ինձնից օ՛վ կանայ խըլի. աշուղի բասն
[իս, քամանչա:

Անգաճըզ էրծաթէն պիտի, գըլուխըզ ջափա-
[հիւր շարած,
Կուժըզ շիրմայեմէն պիտի, փուրըզ սատա-
[փօլ նախ շարած:
Սիմըզ օսկէն քաշած պիտի, էրկաթըզ փան-
[ջարա արած.
Ոչ օվ դիմէթըզ չի գիդի. լալ ու ալմասն
[իս, քամանչա:

ձիպուտըզ վարալնած պիտի՝ թահր ունէ-
[նայ հազար ունգօվ.
Ձարըզ ուշի կուտէն պիտի՝ վուր դուն
[խօսիս քաղցըր հանգօվ.
Շատին զարթուն կուլուսացնիս, շատին
[կուլ քնէցնիս բանգօվ.
Անուշահամ գինօվ լիքըն գո՛ւն օսկէ թասն
[իս, քամանչա:

Ածօղիդ երկու կուլինիս, առաջ չայի դա-
[փա գ'ուզիս,
Կու մէճըրվիս այլմուսմըն, պարապ վախտի
[բափա գ'ուզիս.
Եփ վէր գու քաս մէջիսուսմըն քաղցըր զօղ
[ու սափա գ'ուզիս.
Բօլօրքըզ գօղալնիւր շարած մէջիսի կէսն
[իս քամանչա:

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս. կու
[կտրիս հիւրնդի դուզըն.
Եփ քաղցըր ձայնդ վեր կօնիս՝ բաց կ'ուլի
[հիզըզ խաղօղըն.
Խալիսին ես իլթիմաղն արա՛, ասին. «Ապրի
[քու ածօղըն».
Քանի սաղ է Սայեսթ-Նօվէն, շատ բան կու
[տեսնիս, քամանչա:

Ա.

Ամէն սաղի մէջը գովուած դուն ամբողջ
[դասն ես քամանչա,
Ագահ մարդը քեզ չկրնար տեսնել գօ՛ւն ա-
[նոր պահէն ես, քամանչա.
Ձանք ըրէ որ լաւ օրերուն (տօներուն)
[հասնիս, քամանչա.
Քեզ ինձմէ ո՛վ կրնայ առնուլ, երգողին
[զէնքն ես, քամանչա:

Ականջդ արծաթէ պէտք է ըլլայ, գըլուխդ
[գոհարներ շարած,
Կոժըզ փղոսկրէ պէտք է ըլլայ, փորդ (սէ-
[տէֆով) նկարուած,
Թէլդ օսկիէ պէտք է ըլլայ, երկաթդ ծակ-
[ծակ զարդարուած,
Ոչ ոք քու յարգդ չճանչնար, լալ ու «էլմաս»
[եւ, քամանչա:

Աղեղդ օսկեզօծ պէտք է ըլլայ, փայլ ունէ-
[նայ հազար գունով.
Ծայրդ ուշ ձիուն պոչէն ըլլայ, որ դու խօ՛ւ
[սիս քաղցըր ձայնով.
Շատին արթուն ցորեկ կընես, շատը կը
[քնացընես բանկով (հաշիշով),
Անուշահամ գինօվ լիցուն՝ դուն օսկի թաս
[եւ քամանչա:

Ձարնողդ կրկին կընեզ, մտնջ չայ ու խաշ-
[ուէ կուզես.
Կը մեծարուիս «այլման»ին մէջ, պարապ ա-
[տեն դարակ (րաֆ) կուզես.
Երբ վար կ'իջնաս ժողովի մէջ՝ քաղցը
[«զէֆ» ու «սէֆա կուզես,
Ձորսղիդ տեսքով անձինք շարուած, մէճ-
[լիսին կէսն ես, քամանչա:

Շատ տըխուր սիրտ դուն կը բանաս, կը
[կտրես հիւրնդին գողը.
Երբ քաղցըր ձայնդ կը հանես, կը յորդորուի
[հետդ խաղցողը.
Ժողովըդեան այս շնորհքն ըրէ. բան, «Ապ-
[րի քեզ զարնովը».
Քանի ողջ է Սայեսթ-Նօվան՝ շատ բան կը
[տեսնես. քամանչա:

Բ.

Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանա սիրտ,
Հայա սիրէ, աղաք սիրէ, ար սիրէ.
Աշխարհըս քուէն ըլլի, ի՞նչ պիտի տանիս.
Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:

Էն բանն արա վուր Աստուծու շարքին է,
Խըրատները գրած շարանց վարքին է.
Երեք բան կայ՝ հօգու մարմնոյ կարգին է,
Դիր սիրէ, զալամ սիրէ, զավթար սիրէ:

Ե՛կ արի սի՛րտ, մի՛ կէնա դուն մէ գամաղի,
Հալալ մըտիկ արա հացի ու աղի,
Հէնց բան արա՛ մարթ վըրէդ չըծիծաղի,
Խըրատ սիրէ, սաբըր սիրէ, շար սիրէ:

Հընպարտութին չանիս՝ դուր գուգաս Տէրիդ,
Խօնարութին արա կանց քիզ գէվէրիդ,
Աստուած դիփուսանցըն մին հօքի էրիտ,
Աղկատ սիրէ, զօնաղ սիրէ, տար սիրէ:

Սայա՛թ-Նովա, էրնէ՛կ քիզ թէ կ'ս անիս,
Հօքուդ խաթիր մարմնուդ ունբըր կէս անիս.
Թէ գ'ուզիս վուր դադաստան չըտեսանիս,
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

1753 Մայիս 1

Գ.

Թեգուզ ֆու ֆաւրն մարֆիս սան քոյի
[քոյի,
Թեգուզ ֆու ֆաւրն ալմաս սան քոյի
[քոյի,
Եա՛ր, չ'իմ սա, չ'իմ հիւացնի ֆի՛զ ֆու
[խարեմն Բարեբարեմն:

Չ'իմ ֆաւուի եկած մահեմն,
Բաղիփի սըլած անեմն,
Թեգուզ Բաղամ գայ Շահեմն,
Եա՛ր, չ'իմ սա, չ'իմ հիւացնի ֆի՛զ ֆու
[խարեմն, Բարեբարեմն:

Թեգուզ ֆու ֆաւրն ալմաս սան քոյի
[քոյի,
Թեգուզ ֆու ֆաւրն մարֆիս սան քոյի
[քոյի,
Եա՛ր, չ'իմ սա, չ'իմ հիւացնի ֆի՛զ ֆու
[խարեմն, Բարեբարեմն:

Բ.

Եկուր ինձ աղանջ դիր այ (տիվանէ) սիրտ,
Ամօթ սիրէ, (էտէպ) սիրէ, (առ) սիրէ.
Աշխարհըս քուէդ ըլլայ՝ ի՞նչ պիտի տանիս.
Աստուած սիրէ, հոգի սիրէ, (եար) սիրէ:

Այն բանն ըրէ որ Աստուծոյ շարքին է.
Խըրատները գրած ի շարանց վարքին է.
Երեք բան կայ՝ հօգու մարմնոյ կարգին է.
Դիր սիրէ, զըրիչ սիրէ, տետրակ սիրէ:

Եկ արի՛, սի՛րտ, մի՛ կէնար մէկ (տամաղի).
(Հէլալ) մըտքով նայէ հացի ու աղի.
Այնպէս ըրէ՛ մարդ վըրադ չըծիծաղի,
Խըրատ սիրէ, (սապըր) սիրէ, (չէր) սիրէ:

Հպարտութին չընես՝ հաճոյ ես Տէրիդ,
Խօնարութին ըրէ քեզմէ վարինիդ.
Աստուած ամենուն մէկ հոգի մը երիտ,
Աղքատ սիրէ, օտար սիրէ, հիւր սիրէ:

Սայա՛թ-Նովա, երնէ՛կ քեզ թէ այս ընես,
Հօգուդ սիրուն՝ մարմնոյդ կեանքը կէս ընես,
Եթէ կուզես սր դատաստան չըտեսանես,
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

Թրգմ. Խ. Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Գ.

Եթէ ֆու կեիւովդ մարգարիս սան
[անչափ եւ անհամար,
Եթէ ֆու կեիւովդ աղամանդ սան
[անչափ եւ անհամար,
Սիրելիս, չեմ հեռացնէր ֆեզի ֆու սիրե-
[լիդ: Բարե բարե, ֆու հաւասարեդ:

Չեմ ֆաւուի եկած մահեմն,
Աստուծէ տուած սառապանեմն,
Նոյն իսկ եթէ հրաման գայ Շահեմն,
Սիրելիս, չեմ սար, չեմ հեռացնէր ֆեզի
[ֆու սիրելիդ, ֆու հաւասարեդ:

Թէ որ ֆու կեիւովդ աղամանդ սան
[անբաւ անհամար,
Թէ որ ֆու կեիւովդ մարգարիս սան
[անբաւ անհամար,
Սիրելիս չեմ սար, չեմ հեռացնէր ֆեզի
[ֆու սիրելիդ Բարե բարե:

Դ .

Դուռն էն զըլխէն իմաստունն իս, խելքդ յի-
մարին թաք մի' անի,
էրազդուն տեսածի հիդ միդի մէ հէսաբ
մի' անի,
Ես խօսմ էն գըլխին էրած իմ, նուրմէկանց
քարաբ մի' անի,
Թէ վուր, գիդիմ, բէզարիլ իս, ուրիշին սա-
բար մի' անի :

Ձը կայ քիզ պէս հուքմ հէքիմ՝ դուռն Բոս-
տամի Ձալ, թա' քալուր.
Ասկըդ ասկէրունըն գոված, համ դուռն իս
գողալ թաքալուր.
Թէ էսանց էլ սուչ ունենամ՝ գըլուխս ա-
րա' տալ, թաքալուր.
Մըտիկ արա' քու Ստիգծողին՝ նահախ տիդ
զազար մի' անի :

Եարալուն հէքիմն էնդուր գ'ուզէ՝ գիդ տա-
լու է, ցաւ տալու է.
Քանի գ'ուզէ արբար ըլի՝ դուլըն աղին դալ
տալու է.
Դու քու սիրտըն իստակ պահէ՝ եագի խօս-
կըն ալտալու է.
Աստուծու սէրն կանչողի պէս գըռնէմէդ
ջուզար մի' անի :

Ամէն մարթ չի կանա խըմի իմ ջուրըն՝
ուրիշ ջըրէն է.
Ամէն մարթ չի կարթա իմ գիրըն՝ ուրիշ
գըրէն է.
Բունիաթս ալազ չիմանաս՝ քարափէ քար
ու կըրէն է.
Սէլալի պէս՝ առանց ցամքիլ. դուռն շուտով
խարաբ մի' անի :

Քանի գ'ուզէ քամին տանէ՝ ծովերէն ալազ
չի պահիր.
Թէգուզ ըլիմ, թէգուզ չ'լիմ՝ մէջլիսներուն
սազ չի պահիր.
Թէ կու պահսիմ, քիզ կու պահսիմ՝ աշ-
խարիս մէ մազ չի պահիր.
Սայաթ-Նօլու գերեզմանըն Հինգ, Հաբաշ,
Աբար մի' անի :

Դ .

Դուռն սկիզբէն իմաստունն ես, խելքդ յիմարի
ծառայ մի ընեւ.
Երազիդ մէջ տեսածիդ հետ մեզի մի' շփո-
թեւ.
Ես արդէն սկիզբէն այրած եմ նորէն մի
խորովէր.
Թէեւ, գիտեմ ձանձրացեր ես, ուրիշին
պատճառ մի բռնեւ :

Ձը կայ քեզի պէս բօխչներու բօխչի, դուռն
Բոստամի ծով թազաւոր.
Ազգդ ազգերուն մէջ գոված և գեղեցիկ
թազաւոր.
Եթէ ես յանցաւոր եմ գլուխս առնել տուր
թազաւոր.
Մտիկ ըրէ քու ստեղծողին, անիրաւ տեղ
մի' բարկանար :

Ինչպէս որ երբ վերաւորը բօխչի կ'ուզէ,
Դեղ տալու է, ցաւ տալու է.
Որքան ալ զրկած ըլլայ, ծառան տիրոջը
բողոք տալու է.
Քու սէրդ շիտակ պահէ. ուրիշին խօսքին
մի' հաւատար.
Եւ Աստուծոյ սէրը կանչողի նման գռնէդ
պատասխան մի' տար :

Ամէն մարդ չը կրնար խմել, իմ ջուրը ու-
րիշ ջուր է.
Ամէն մարդ չը կրնար կարդալ, իմ գիրըն
ուրիշ գիր է.
Համբաւս աւազ չը գիտնաս քարափի քար
ու կիրէն է.
Հեղեղի պէս չը ցամքած, դուռն շուտով ա-
ւերակ մի' ընեւ :

Քանի կուզէ քամին տանի, ծովէն աւազ
չի պահիր.
Ես ըլլամ թէ ոչ, խնջոյքներու մէջ սազ չի
պահիր.
Եթէ պահսիմ, քեզ կը պահսիմ աշխարհին
մէջ մարդ չի պահիր.
Սայաթ Նօլայի գերեզմանը, Հինգ, Հապէշ,
Աբապ մի' ընեւ :

Ե .

Մէ խօսի ունիմ իրթիմազով, անգահ արա',
ժ'վ աչքիլուս.
Սըրտումըն ինթիլար ունիմ, քու տիւրն
բարով, աչկիլուս.
Աջա' քիզ ինչ գէթ իմ արի՝ կէնում իս
խրով, աչկիլուս.
Աշխարս աշխարով կըշտացաւ, իս քեզանից
սով, աչկիլուս :

Մագամ էլ ոչ օվ եար չէ սիրի, էս ինչ
արիւր, էս ինչ բան ա.
Էշխէմէդ ջուռունն իմ էլի, ման իմ գալի
եանա եանա.
Էս գարդէն ոչ օվ չը քաշէ, վուր մէ գար-
դին չի գիմանա.
Սիրտըն լուրի պէս խօրվէցիւր էշխիդ կը-
րակով աչկիլուս :

Դոստիրըս դուշման շինեցիր, եագերուն
ինչպէս դոստ անիմ.
Անցկացած օրըն չ'իմ տեսնում քանի գու-
ղէ վուր դոստ անիմ.
Աստուած վըկայ, խիտ գըժար է, գըլու-
խըն ինչպէս դոստ անիմ՝
Ես մէ փութըր նալի նման, քու էշխըն է,
ծով, աչկիլուս :

Գ'ուզիմ բերանըս բաց անիմ, գովքըդ ասիմ
թարիփի պէս.
Տաս տարի է ման իմ գալիս փատիշանի
շահիփի պէս.
Օխտըն տարի էլ ման դու քամ սազըն ձե-
ռիս Ղարիբի պէս.
Բութա Շահսանամըս դուռն իս, էլ չ'ունիմ
օջ օվ. աչկիլուս :

Թէգուզ հազար գարդ ունենամ, ես սըր-
տումս ա'ն չ'իմ ասի.
Իմ հուքմի հէքիմըն դուռն իս, ես էլ ուրիշ
Շահ չ'իմ ասի.
Սայաթ-Նօլէն ասաց. Ձալում, ես էն մահին
մահ չ'իմ ասի.
Հէնչափ ըլի՝ դուռն վըրէս լաւ մազըդ շազ
տալով, աչկիլուս :

Ե .

Խօսք մը ունիմ աղաչանքով, մտիկ ըրէ ով
աչքիլոյս.
Սրտիս մէջ կարօտ ունիմ քու բարով տե-
սուդ, աչքիլոյս.
Արդեօք քեզ ինչ ըրի, սրդողած կը մեաս
աչքիլոյս.
Աշխարս աշխարհով կշտացաւ, ես քեզմէ
սով, աչքիլոյս :

Քանի որ ոչ ոք եար չը սիրեր, ես ինչ ը-
րի, առ ինչ բան է.
Սիրոյդ խելազար եմ եղեր, կը քալեմ այ-
րած սրտով.
Այս գարդէն ոչ ոք թող չը քաշէ, որուն
մարդ չի գիմանար.
Սիրտըս լուրի պէս խորովեցիր, սիրոյդ
կրակով աչքիլոյս :

Բարեկամներս թշնամի շինեցիր, օտարները
ինչպէս բարեկամ ընեմ.
Անցած օրը չեմ տեսներ, որքան ալ ուզեմ
ջանք ընել.
Աստուած վկայ, խիտ գըժար է, գլուխս
ինչպէս հանդարտեցնեմ.
Ես մի փութըր նաւու նման, քու սէրդ ծով
աչքիլոյս :

Կ'ուզեմ բերանս բաց ընեմ, գովեստ ըսեմ
գովասանքի պէս.
Տասը տարի է ման կուգամ թազաւորի Շա-
հապի պէս.
Եօթը տարի ալ ման կուգամ սազը ձեռքս
զարիբի պէս.
Սիրահար Շահսանամըս դուռն ես ուրիշ ոչ
ոք ունիմ, աչքիլոյս :

Թէ որ հազար տէրտ ունենամ, ես սրտէս
ա'ն չեմ ըսեր.
Իմ հիւանդութեանս բօխչը դուռն ես, ես ալ
ուրիշին Շահ չեմ ըսեր.
Սայաթ Նօլան կ'ըսէ. անգուրթ, ես այն մա-
հուն մահ չեմ ըսեր.
Այնչափ ըլլայ որ դուռն վրաս լաւ, մազերդ
թափուած, աչքիլոյս :

2.

Թէգուզ դպրատանն պահ տաս, ծեծով չի խը տալի խիվըն,
Խնչու անձնէն չը դուս էնայ անախակի էն չար դիվըն:
Թէգուզ իմանաս, դիզէնաս ասողերու համբանքն սիրուն,
Անբարի գուրծը կորած է. կարթա՛ Հարանց վարքըն սիրուն:
Վուր աիդ հասնիք, վուր աիդըն սուք, վուր աիդ սոյրաթ խաղ է ըլում:
Վուր աիդ ժամ, վուր աիդ պատարագ, վուր աիդ սիրով տաղ է ըլում:
Թէ վուր հօքուդ կամքն իս անում մարմինդ բեղամաղ է ըլում:
Վուր մէ գարդին կու գիմանան դուն ջըրատար Սայեաթ-Նովա:
Կու հանքնիմ մաղէզէն, կու հանքնիմ շալըն,
Կէրթամ ու ման գու քամ վանքերըն մէ մէկ:
Բոս դէկար, դունիս վաղիս իմիշ,
Օնու իչուն սոյրաթ սաղտան դօրխարամ:
Սայեաթ-Նովա դին ըսեա ինքար էթմաս՝ էրմանի դուր:

է.

Ուսի՞ գու քաս, դարիպ բըլբուլ,
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու
Դու վարք պըսոէ՛, ես գօզալին,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:
Արի՛, բըլբուլ, խօսի՛ բառըն,
Օխնըվի՛ քու եկած սարըն
Քի վարքն երից, ինձ իմ եարըն,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:
Ման իմ գալի գիդարի հիդ,
Վունց դարիբ բըլբուլ խարի հիդ.
Դու վարքի հիդ, ես եարի հիդ:—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:
Սալբուի նըման կանանչ իմ,
Ե՛կ, խօսի՛ ձայնդ նանանչիմ,
Դու վա՛րք կանչէ՛, ես եար կանչիմ,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:
Ղա՛րիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,
Ես ու դու երվինք մի հալում.
Սայաթ-Նովան ասաց զա՛լում,—
Դու մի՛ լաց՛լի, ես իմ լալու:

Է.

Ուրիկ՞ կուգաս պանդուխտ պալուլ,
Դուն մի՛ լար, ես եմ լալու,
Դու վարդ փնտէ, ես՝ աղուոր,—
Դուն մի լար, ես եմ լալու:
Ելիւ պալուլ, քսէ խօսքեւ,
Օրհնուի քու եկած սարըն,
Քեզ վարդը ալբեց, գիս ալ սիրունիւն,—
Դու մի լար, ես եմ լալու:
Կը պսսիմ դեմքդ տեսնելու,
Ինչպէս պանդուխտ պալուլը՝ փսւլին հետ
Դու վարդի հետ, ես եարի հետ,—
Դու մի լար, ես եմ լալու:
Նոնիի նման կանաչ եմ,
Եկ խօսիւ, ձայնդ կը նանանչեմ,
Դու վարդ կանչէ, ես եար կանչեմ,—
Դու մի լար, ես եմ լալու:
Պանդուխտ պալուլ, ձայնդ ծանօթ է,
Ես ու դուն կայրինք մէկ վիճակով,
Սայաթ-Նովան ըսաւ, անգուր,—
Դուն մի լար, ես եմ լալու:

Թրգմ.

2.

Թէպէտ դպրատան մէջ գօցես, ծեծով չը խըրատուիր խեւը,
Մինչև մարմնէն դուրս որ չելլէ անյաղթելի աջն չար դեւը:
Թէպէտ հասկնաս ու գիմանաս ասողերուն համբանքը, սիրուն,
Անթարի գործը կորած է. կարգա Հարանց վարքը, սիրուն:
Տեղ մը հարոնիք և տեղ մը սուգ, տեղ մը դրօսանք ու խաղ կըլլայ.
Տեղ մը ժամ, տեղ մը պատարագ, տեղ մըն ալ սիրով տաղ կըլլայ.
Թէ որ հոգւոյդ կամքը ընես՝ մարմինդ անհանգիստ կ'ըլլայ.
Ո՞ր մէկ տէրաին կը գիմանաս դուն ջըրատար Սայեաթ-Նովա:
Կը հազնիմ մաղեղէն, կը հազնիմ շալը,
Կ'երթամ ժուռ կուգամ վանքերը մէյ մէկ:
Կը համատեսեն թէ աշխարհս երազ է.
Ուստի խաղէն ըզրօսանքէն կը վախեմ:
Սայեաթ-Նովա Քրիստոսի հաւատքը չուրանար, հայ է:

Ը.

Դարդ մի՛ անի ջան ու ջիկար, միաքըդ
դիվաց չը տեսնէ.
Աչըկ խալըրի, անգամ խուլանայ՝ էրէ-
սըդ թաց չը տեսնէ:
Վո՛ւնց արեգակն չուզ կը տա՛յ, վո՛նց
լուսինը լուս անէ՛.
Ավալ քու տէսնողըն մեռնի՛ քիզ գըլ-
խիւաց չը տեսնէ:
Դուն գըլուխըդ մահի կու տաս, ես էլ
քիզիդ կու մէռնիմ.
Մի՛ր էդնէն թամամ աշխարհս սով քա-
չէ, — հաց չը տեսնէ:
Թէ վուր չը գամ ու չը տեսնեմ՝ հազար
քարաթ բան կօխս.
Քաշկա մարթ վո՛ւնց դայ, վո՛ւնց խօսի,
վո՛նց քի արխրած չը տեսնէ:
Աստուծու բէրնէմէն տունիս մըլխիթա-
րիչ սուրփ հօքին.
Էլ վաղ մէռնի Սայեաթ-Նովէն՝ ճիւղդ
գըցաց չը տեսնէ:

Թ.

Հոգ մի՛ ըներ, հոգեակըդ իմ, միաքըդ
դիվաց չը տեսնէ.
Աչքս խաւարի, տկանջս խուլնայ՝ ե-
րեսդ արցունք չը տեսնէ:
Ո՛չ արեգակը թող չո՛ղայ, ո՛չ լուսին-
կան՝ լոյս ընէ.
Մեռնողն ըզքեզ՝ առա՛ջ մեռնի՛ քեզ
գլխարաց չը տեսնէ:
Դուն գըլուխըդ մահուան կու տաս, ես
ալ քեզմէ կը մեռնիմ.
Աշխարհն ամբողջ մեր երկուքին սո՛վ
քաչէ, — հաց չը տեսնէ:
Թէ որ չը գամ ու չը տեսնեմ՝ հազար
անգամ խօսք կ'ըսես.
Երանի թէ մարդ ոչ գայ, ոչ խօսի, ոչ
ալ քեզի արխրած տեսնէ:
Թո՛ղ Աստուծոյ բերնէն տունես մըլխի-
թարիչ սուրբ հօգին.
Սայաթ Նովան կանուխ մեռնի՛ ըզքեզ
մեռած չը տեսնէ:



Թ .

Սայեաթ-Նովէն.— Ինչ կօնիմ հեփիմբն, ինչ կօնիմ ջարեն՝
Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ:
Էրդւմ է մրկւամբն, չ'է լաւնում եարեն,
Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ:

Սիրէկանն.— Ասաց քե. «Հիռացի գրլխեմէս գրեա՛,
«Քու ասածքն ուրիւ սիլ է, ո՛ւրիւ սիլ:
«Էս քու արարմունքսն քիզի չ'ի մրնա,
«Քու ասածքն ուրիւ սիլ է, ո՛ւրիւ սիլ»:

ո՛ւրիւ տիլ. տմա՛ն, ուրիւ տիլ:

Սայեաթ Նովէն.— Ասի քե. «Էլսեմէկ չ'իմ հանգչում տանք,
«Չեմիրքս քրլացաւ՝ չ'է շինում բանք,
Էրկեցաւ ջիգարքս, մաշուեցաւ ջանքս՝
«Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ»:

Սիրէկանն.— Ասաց. «Իմ գիլեմէն քիզ չը կայ չարա,
«Գրնա՛ քե խիլ ունիս՝ գրլխիդ հար արա՛
«Թէ չէ՝ անիլ կու տամ քիզ փարա փարա
«Քու ասածքն ուրիւ սիլ է, ո՛ւրիւ սիլ»:

Սայեաթ-Նովէն.— Ես բրլբուլ իմ, վարքս մրնաց խարումբն,
Կրակ գրիւ սրսիս խուցի եարումբն.
Վո՛ւնց գրածումբն կայ, վո՛ւնց դավարումբն՝
Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ:

Սիրէկանն.— Ասաց քե. «Քի զարա՛ շինեցիր շահրդ.
«Կրսեցիր աղաբրդ, կրսեցիր անրդ.
«Մի՛ վիթի արունրդ, մի՛ շանց տա մանրդ,
«Քու ասածքն ուրիւ սիլ է, ո՛ւրիւ սիլ»:

Սայեաթ-Նովէն.— Ասի քե. Մագիրդ. սուրմա իս անում,
«Հենց գիդիս՝ չ'իմ գիդի, եա՛ր, չ'իմ խմանում.
«Մերդ ինձ մահ դարաւ՝ էլ չ'իմ դիմանում,
«Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ»:

Սիրէկանն.— Թափավուրի քազի լայիլ հարն իմ.
Շիրինի պէս Փահրադի դիզարն իմ,
Ես եմ գրլխէն Սայեաթ-Նովու եարն իմ,
Քու ասածքն ուրիւ սիլ է, ո՛ւրիւ սիլ:

Սայեաթ-Նովէն.— Հիդքս խօսի՛, մի՛ կենա խրոսի պէս.
Տալդա սրվի՛ր՝ գեմիս տարա ծովի պէս,
Կու մեռնիմ, — չ'իս տեսի Սայեաթ-Նովի պէս,
Քու սրվածքն ուրիւ գիլ է, ո՛ւրիւ գիլ: *աման ուրիւ դիլ:*

Յիշատակարան մեր երկասիրութիւնը որ հրատարակուած է 1909-1914 չրջանին և որ պատկուած է Սահակ Մեսրոպեան 1912 տարւոյն մը յանկաւ, ըստ կտաւի բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի, բոլորովին սպառած է: Ամէն կողմէ մեզի եղած խնդրանքներուն գոհացում տալու համար հետզհետէ կը հրատարակենք Հայ երեւելիներու կենսագրականները, լուսանկարները, գրութիւնները և նմանահանութիւնները իրենց գործերուն հետ, անոնք որոնք հրատարակած ենք և անոնք որոնք չեն հրատարակուած այն տառն: Նկատելով գործին բազմածախս հանգամանքը, «Յիշատակարան Մասեմաւար» անունով պրակներ կը հրատարակենք, սպասելով Հասարակութեան քաջալերանքին:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ ԼՐԱՅՈՒ Է:

ՄԵՐ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ

ԳԱՂՐԷ

Արշ. Յովհան Գերապայժա Գուգեան՝

Առաջորդ Եաթողիկէ Հայոց եպիսկոպի, Ա. և Բ. Հատորները

Տեարք Լեւոն Տատուրեան Բ.

Գեղամ Տէր Միքայէլեան Բ.

Տօքթ. Փիլիպպոսեան Բ.

Մէթր Գ. Տիւրկէրեան Բ.

Յովսէփ Ազնաւուր Բ.

Արմենակ Արամեան Բ.

Օ. Տէմիրքերեան Ա.

Նշան Գալստիքեան Բ.

Գէորդ Բամպուքճեան Բ.

Մեսրոպ Գուլումճեան Բ.

Խորիս Զաքարեան Ա. և Բ.

Պետրոս Տէփոսեան Ա.

Նասիւր Թորգոմ Բ.

Արթին Գալստիքեան Ա.

Արապէս Մէսթճեան Բ.

Զարմայր Քէչիկեան Բ.

Լեւոն Թաճեան Բ.

Սահփան Փափ գեան Ա.

Տեարք Մկրտիչ Անգրանիկեան Բ.

Տօքթ. Օհանէսեան Բ.

Մէթր Շաւարշ Աւետիսեան Բ.

4 օրինակ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

Տեարք Ա. և Յ. Օտարաշեան Բ.

ԿԱՆ ՀԱՄԱՏԻ

Տիար Նուար Թաթաթեան Բ.

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Գեր. Յաւ. Վ. Պարոնեան Ա. և Բ.

ՊԵՅՐՈՒԹ

Տիար Թորգոմ Ղազարոսեան Ա.

ՃՐԱՆՍԱ

Տիար Լեւոն Պողոսեան Ա.

ՀԱԼԷՊ

Տիար Դրիգոր Ազիրեան Ա. և Բ.

ԼՐԱԳ

Տիար Ա. Համբարձումեան Ա. և Բ.

Նորհակալութիւն կը յայտենք Մէթր Շ. Աւետիսեանի որ ինչպէս Ա. հատորին, նոյնպէս Բ. հատորին ալ 4 օրինակ բաժանորդագրուելով կը նուիրէ Պէրպէրեան, Գալստեան վարժարաններուն և Օր. Անահիտ Նաւասարդի:

Բացուած է «Յիշատակարան Մասեմաւար»ի Բ. Հատորի բաժանորդագրութիւնը

10 պրակի բաժնեգինն է 25 Ե. Դ. պրակը 2 1/2 և Արտասահման 30 Փր.,

Ամիրիկա 1.50 տոլար: Առաջին Հատորը կը վաճառուի 30 Ե. Դ.

Հասցէ՝ VAHAN ZARTARIAN, LIBRAIRE-EDITEUR

18, Rue Tewfik — LE CAIRE (Egypte)

Cliché

«KALEA»

Imprimerie AGOP PAPAIZIAN - 3, Midan Suarès, Le Caire (Egypte)